

# ՃԱՇԱԿ

ԱԱԿԱՊԱՅՆ ՊՊՐԱՄՔԵԱՆ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

Զերկուց իմ կայ մեզ առաջի ճառել, նախ՝ երկարագոյնս  
զծնդենէ և զզարգանալոյ Հայ լեզուին մինչեւ ի հասանել  
նորա յարբունս, կամ, մինչեւ ի մատենագրութիւնն առաջ-  
նոյ կիսուն Ե. դարու, որ է ոսկեղինիկ ժամանակ Հայ դպրու-  
թեան. երկրորդ՝ զծերանելոյ, կամ, այլով բանիւ, զանկ-  
մանէ նորա և զոլէսալէս կերպարանացն զոր առ նա անտի մին-  
չեւ առ մեզ: Զէ պարտ մոռանալ սակայն զի ծնունդ. և  
զարգացումն հայերենին է հին յոյժ, թաղեալ ի մթութեան  
ժամանակաց. և ոչ խաւք ինչ, որպէս երկրաբանութեան,  
կան մեզ առաջի, յորս իմիլ արկեալ որոնէաք գտանել զօ-  
րինակս փոփոխմանց ընդ որս անց լեզուն: Զոր ասելոցս եմք  
սակայն է յայտնագոյն մասն այսր կարեւոր խնդրոյ. զի չէ  
մեր դիտաւորութիւն հերձուլ զեզուն ի գտանել զտարերս  
նորա ի համեմատութեան համացեղ լեզուաց: Զայսմանէ տես-  
ցեն ընթերցողք բազում ինչ ի մատենին «Հնդեւրոպական նա-  
խակեզու», » Հ. Սերովը էլ Տէրվիշեան, գործ արդարեւ լի հըմ-  
տութեամբ, որպէս և ի միւս ևս գործ նորա գերմաներէն  
զնշանագրէն Ք:

Հետազօտութիւն մեր եղիցի զկազմութենէ և զյօրին-  
ուածոյ Հայ լեզուին ըստ կերպարանացն որով ընծայանայ նա  
մեզ ի մատենագրութեան առաջնոյ կիսուն Ե. դարու. զի  
լեզուն որ յետոյ է, եթէ իցէ կարեւոր, է իրու պատմու-  
թիւն միայն, և ոչ իբրեւ բարբառ զոր ըստ բուսոյ բարուցն  
կայ մեզ ցուցանել ի մտի, որպէս գործ հանձարոյ որ, եթէ  
այլ ամենայն յիշատակարանք լւեցեն, առանձինն իմն պատ-  
մութիւն է որ խօսի զմտաւորն և զքաղաքային հանդամա-  
նաց ազգին, ի ծաղկի անդ իւրոյ ազատն կենաց:

4. ԾՆԱԽԵՆԴԻ ԵՒ ԶԱՐԴԱՑՈՒՄՆ ՀՅՅ ԼԵԶՈՒԻ

Յայտնի իմն է ընթերցողաց թէ գոյ այժմ նոր իմն զիւտութիւն զոր մարթ լիցէ թերեւս կոչել լեզուաբանութիւն, և որ ճառէ զծննդենէ և զյօրինուածոյ լեզուաց առհասպակ, և ի համեմատութենէ ձայնից և բանից, և ի բնութենէ յօրինուածոյ նոցա թուի իմն դտանել զմերձաւորութիւն նոցա և զմնամութիւն, և զուշակէ զօրինակ յատաջ խաղաց իւրաքանչիւր ի նոցանէ փոփոխութենէ ի փոփոխութիւն, մինչեւ յատնուլ նոցա զայժմուն ձեւ և զիերպարան :

Ըստ մերձաւորութեան նոցա և կամ ըստ օտարութեանն ի միմեանց բաժանեալ զնոսա յերիս տոհմն ըստ անուան երեց որդւոց նոյի, Սեմայ, Քամայ և Յարեթի ըստ Գրոյն, զմիոյ տոհմի լեզուս կոչէ Սեմականս, զմիւսոյն Յարեթականս կամ Հնդիկ-Եւրոպականս և կամ Արխականս, և զմիւս եւս այլոյ տոհմին կոչէ Դուրանեանս որ են թաթարական լեզուք :

Ի հետազոտութենէ Հայ լեզուին և ի համեմատութենէ նորա ընդ այլս, դտանի զի հայերէնն է ի տոհմէ Հնդիկ-Եւրոպական լեզուաց : Ի տոհմէ աստի են ազնիւ լեզուն Հընդկաց որ սանալըստն կոչի. առընթեր Հնդկաց յարեւելս կոյս մինչեւ ի ձախակովմեան սփուռնս Տիգրիս գետոյ՝ Արեաց լեզուք, որոց գլխաւորքն էին զանդիկն կամ հին բակտրիական, մարն և պարսիկ. անտի առ հիւսիսիւ մինչեւ ի ծագս Եւրոպայ՝ լեզուք հին սկիւթացի և սարմատ ազգաց, որ են սրդի անուամբ գերմանականքն և պաւեանք, և առ նոքոք ի հարաւոյ հելենականն և խորուսկական, այն է՝ յոյնն և լատին :

Արդարեւ եթէ մանր ոք միտ դնիցէ հայերենին, դտանէ, ոչ ի բանս միացն, այլ և ի յօրինուածս դպրութեան նորա, ոչ դոյզն ինչ նմանութիւն ընդ հնդիկ-Եւրոպականն լեզուաց, մանաւանդ երկուց կամ երից ի նոցանէ, այն է՝ յոյն, լատին և զանդիկ լեզուաց :

Եթէ հայերէնն է ի տոհմէ անտի հնդիկ-Եւրոպականն լեզուաց, հաւանութեան է թէ և ազգն եւս էր ի նմին հնդիկ-Եւրոպական բնոյ, և շահեալ տիրեսղ ունէր ի վազուց անսի

զգեղեցիկ հովիտն Արասիսայ , զայն որ յաւանդութեան մերում և Սեմականաց անուանեալ կոչի « Այրարատեան աշխարհ » , կամ , « Նըլիր Արարատայ : » Այդրենածի՞ն էին սակայն Հայք անդ թէ այլուստեք եկեալ հատուած , չէ գիւրին որոշել : Այդրենածինն լինել նոցա չժուի հաւանութեան . ապա էին հատուած . այլ թէ երբ և ուստի եկին անդր , տուել նոյնպէս դժուարին է : Թողումք զերլն , զի յառաջազյն է այն քան զպատմութիւն , այսինքն յայնպիտում ժամանակի մինչդեռ ոչ գիր էր և ոչ գալրութիւն և ոչ այլ ինչ որով մարթ էր թողուլ յիշատակ տայապայ եկելոց : Գալով յուստին , իցէ թերեւս հնար գուշակելինչ ի բուն խակ ի լեզուէն : Արդարեւ ի քննել մեր զհայերէնն և ի համեմատել զնարնդ հնդիկ-եւրոպական լեզուս , գտանեմք կրկին իմն ազգս անուանց առ մեզ . մին՝ հնագոյն զրո մարթ է կոչել նախաւոր և ուսպհամբան , և միւսն՝ եկամուտ և ընտելացեալ : Առաջինքն թուին ունել մերձաւորութիւն կամ խնամութիւն ընդ յոյն և բատին արմատոց . երկրսրդքն թուին մանաւանդ . ի զանդիկ արմատոց , առաւել իմն սարսիկ ձեւով :

Դիտել պարտ է զի ի հիւսիսային մասին Փոքուն Ասիայ ի կորի հին ժամանակս , զոր կանխապատմական կոչել սովոր են գիտունք , բնակէր ժողովուրդ ի հնդիկ-եւրոպական տոհմէ , յորս նշանաւոր եղեն Փուրւգայիք , որոց ազգակից թուին լեալ Տրովացիքն այնպէս անուանիք ի հնումն : Ի Փուրւգացւոց աստի երթային ստէպ հատուածք յարեւելս և յարեւմուտս : Ըստ հին ինչ աւանդութեան , ի Փուրւգացւոց կամ ի դրացեաց նոցա ի Տրովացւոց էր նախնին Հռոմայեցւոց Ենէաս : Լեզու Փուրւգացւոց , որպէս և Տրովացւոցն , թէպէտ և կորուսեալ , թուի սովորայն թէ էր ի հնդիկ-եւրոպական տոհմէ : Անուանք զորս յիշեն Հոմերոս և այլք , որպէս Լաւոմեդոնն , Պրիամոս , Պարիս , Անքիսէս , այլափքն հանդերձ , մեկնին մանաւանդ հնդիկ-եւրոպականաւ քան սեմականաւ : Այլ իմն աւանդութիւն , թէպէտ աղօս յոյժ առ Ստրաբոնի (Տալր. մի. 13) , դնէ և զհայս եկեալս ի Փոքուէն Ասիայ : Հերոդոտոս և այլք ոմանք ի հին պատմագրաց համարին զհայս ոչ հանդերձիւ միայն և զինու , այլ և տոհմաւ և լեզուաւ մեր-

ձաւորս Փռիւգայւոյ : Թէպէտ բանք սոցա թուին լինել մասաւանդ զբնակչաց Փոքուն Հայոց քան զժողովրդենէն Արարատայ , չթուի սակայն ամենեւին օտար ի ճշմարտութենէն դնել թէ ի կարի վաղ ժամանակս , թէպէտ և չէ յայտ թէ երբ , մեծ իմն հատուած ի հնդիկ-եւրոպական ժողովրդենէ անտի Փոքուն Ասիայ ել յարեւելս կոյս , մինչև եկեալ ընակեցաւ ի հովտին Երասիսայ և շուրջ զնովաւ : Զայս ցուցանեն ոչ այնչափ աւանդութիւնքն որ ի վերոյն յիշեցան , որչափ ներքին ինչ նշանք լեզուին : Եկեսցուք ուրեմն ի պատմութիւն լեզուին :

(Պատուացի յառաջ)

Ա. Մ. Պ.

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

### Ա Ր Ա Խ Ե Ն Ա Ր

Այս քաղաք նշանաւոր ի հնումն , զորմէ վիպեն առասպեկք անուանեալ յանուն Աթենասայ , դից խմասութեան , էր յառաջին դարս անդ , որպէս և զարդիս , ոստան Հելլին պետութեան : Զշնուածոյ քաղաքիս չեն միաբան սպատմադիրք ժամանակայ : Կեկրոպեայ ումեմն եդիստացւոյ ասի արկանել զհիմունս Աթենացւոց քաղաքին , իրրեւ երկու հազար ամօք յառաջ քան զիբրիստոս , և մուծանել զառաջինն յԱստիկէ զարուեստ երկրագործութեան և զմշակութեան ձիթենուոյ , և կարգել անդ զարացամանունս Աթենասայ : Բայց չմարթի գիտել հաւաստեաւ՝ եթէ ո՞ սկիզբն արար չինուածոյ քաղաքին :

Այլ եթէ չմիաբանին առասպելախառն պատմութիւնք զքաղաքին չինելոյ , ամենայն պատմագիրք Յաւնայ և այլոց ազգաց միաբանին խօսել մեծաւ գովութեամիւ զաքանչելի քաղաքէն Աթենացւոց և զհոյակասալ գործոյ հարց նոցին նախնեաց . նա՝ եթէ չըր իսկ ի վաղուց ժամանակայ անտի մինչև ցմեր ժամանակս ընծայեալ պատմչաց զնկարագիր հնոյ

քաղաքին և ածեալ ի հանդէս զմեծամեծս Աթենացւոց ,  
բաւական էին արդ վազափու հնութիւնք և բեկորք ճար-  
տարութեան պատուականք փառաւառը տոնել գքաղաք դիցն  
Պալլասայ և զգարմանագործ ազգն Հելլենաց :

Եէ հնար ումեք կալ ի զնին աւերածոց քաղաքին և ոչ  
զարմանալ ընդ ճարտարութիւնս աւագ արանց հնոյն Աթենայ .  
ընդ մեծագործ շինուածս Միջնարերդին , որ կոչի յունա-  
սէն Ագրօ' թօլիս . ընդ անհնարին շքեղութիւն տաճարին որ  
ի նմա՝ յանուն Աթենասայ կանգնելց . ընդ գեղեցիկ քան-  
դակագործս խոյսկաց մեհենին Արամազդայ , և ընդ վայե-  
լուչ յօրինուածս Թեսեայ տաճարին : Անդրիք քարեղէնք ան-  
մահցն Արամազդայ , Հերայ , Ապողոնի և այլոց դից և դիւ-  
ցազանց , և Սոկրատայ և Դիմոսթենեայ պատկերք կոփա-  
ծոյք , ամփոփեալք ընդ յարկաւն Թեսեայ , սքանչելիք են  
ամենեւին հելլէն դրոշագործութեան , որ ընդ մատամբք  
քաջին Փիդիասայ եհաս ուրեմն ի բարձրաբերձ բարձունս  
կատարելութեան : Թէ կացեալ ոք ի Միջնարերդի անդ , որոց  
է բարձրութիւն առաւել քան զէարիւր մէդր , հայիցի ընդ  
ընաւ , ցոր վայր տեսանել զօրիցեն տչք , ի հեռաւար կա-  
տարս անդ կամ զկողիւք մօտաւոր բլրոց գան նմա ի տես  
մնացորդ հնոյն Աթենայ , ուիւն ինչ կամ կոթոլ կամ պա-  
րիսպ վիտզեալ , կարկառակոյտ քարանց աւերածոց մեհենի  
կոմ թատեր , որսկախ է շուրջդժատերբն Բաքոսի , և այլ  
եւս ազգի ազգի մասունք հնութեանց :

Արիստակին աւերածք են հանդէալ Միջնարերդին , յա-  
րեւմոխց կուսէ , զմիջոցաւ բլրակի միոյ : Թէպէտ չլիցէ մարթ-  
այժմ նշանակել գտակաւ զտեզի ատենին վասն աւերածոցն  
սաստիութեան , թէպէտ հիմն ի վեր յատակեալ շինուածն  
ամենացն , այլ յաղնուութենէ քարանցն , յորոց հատանին  
նշոյք լսւաց ընդ ճառագայթիւք արեգակոն իրեւ յականց  
վանեացց , չմարթի զիրիսպագոսն զայն չհամարել շինուած  
դեկեցիկ յոյժ և ըստ անուանն նշանաւոր յԱթէնս և ընդ  
ամենայն աշխարհն Յունաց :

Կ վերայ բլրակի Արիստակին են աւերակիք Պերիսլատիկ-  
եանց դպրոցին . սանդուղք ինչ եւեթ մնան վիմատաշք ի

շինուածոյ անտի : Ի ամա , որպէս յացտ է , երթեւեկս առեալ Պերխալատիկեանք ուսուցանէին զաշակերտեալս իւրեանց ի խրատս խմաստոթեան և ի հրահանգո կրթութեան բարտու :

Յայնկոյս Արխալաղին , դէմ յանդիման բլրոյ Միջնազերդին , մնայ ցարդ բանտան Սոկրատոյ փորածոյ ի վիմի . կրկին են խորչը ի բանտին , և երդ մի լուսանցոյց ի վերուստ զօրէն հնոց : Աստ եկաց Սոկրատ ամսօրեայ մի ժամանակ , — այն որ եղեւ ի խնդիր ճշմարտին Աստուծոյ , — յետ վճռոյ դատաստանին որ դատավարտէր զհէքն ի մահ , մինչեւ ցօրն յորսում ընկէր հանդպարտիկ զրաֆակ մահու ի գիրկս բարեկամոց որ լոյին զնա , և կարձէր անդ ի կենաց ընդ երեկս , յորման արեւն ի մուտս լինէր : —

Այսչափ ինչ ասել բառակոն լիցի զհնոյն Աթենայ , զոր և վաղ իսկ մանրապատում արտրեալ է մեր ի գիրս Առջեւորութեան մերոյ յԱթէնս :

Յ. Գ.



### Յ Ի Ս Ո Ւ Ե Ա Ն Ք (1)

Նախ հնազանդութիւնն որով ել Յիսուսեանն յասպարէզ , և որով արդարեւ մեծամեծո դործեաց , նոյն ետ նմա գլորել : Հնազանդութիւն Յիսուսեան միանձին էր կյց , որ չէ արդարեւ սլարսաւանաց յանձին վանտկանի , նու մանտանդ գովելի խակ , եթէ չանցանիցէ բառ չափ : Յիսուսեանն գլորեցաւ , ոչ վասն հնազանդութեանն , այլ վասն չարոշարն ի կիր արկանելց զայն , կամ վասն զի տուաւ նմու չարաշար ի կիր արկանել : Համարէր նա զանձն իրեւ զինուոր ի հակատու որ ոչ այլում խմիք ունիցի ակն , եթէ ոչ ի զլու խհանելց զյազիթութիւնն . որ դիմագրաւն երթայ ի սրամերազմ՝ չխարի զապդ զինուն , զի կայ ի մէջ կենաց և մահու : Այսպիսի էր Յիսուսեանն . մտանէր ի հնարս հայթայթանաց . ընտրէր զարդարն և զօրինաւոր , այլ չկայր ի նմին . ի չափովէր՝ չխորչէր ի հակատակէն , զի միում միայնոյ ունէր ուշ ,

(1) Տես զթիս Ա.

յաղթելոյ : Մատն լինէր իւրոյ անմեզութեանն , ձշմարտութեան իսկ , եթէ այնպէս իմն պահանջէին դէսկըն . զի չէր պարտ նմա մոռահալ , թէ ամենոյն ինչ օրինաւոր է այնո՞ր ի շահ եկեղեցւոյ գործէ : Զամենայն ինչ տայր Յիսուսեանն Աստուծոյ , կայսեր՝ և ոչ ինչ , հակառակ հրամանին որ տաէ . Տալ զկայսերն՝ կայսեր , և զԱստուծոյն՝ Աստուծոյ : Ե ապագէն ինչ զորավլ չէ անսպատիժ անցանել ոչ այնո՞մ միայն որ հնապանդի , այլ և այնո՞մ որ հրամայէ :

Երկրորդ պատճառ որ ետ նմա զեղծանել՝ էր յանչափն վարել զպարտու իւրոյ կոչմանն : Հակառակ վանականաց այլոց կարգաց , որ կային զատուցեալ իւրաքանչիւր յիւր վանս և յիւրում խցկան փոյթ յանձին կալեալ զիւրոյ անձին փըրկութենէ , գործ Յիսուսեան մատնձին էր արդարիւ բառնալ զայլոց հոգ : Այս ետ նմա հաւատալ թէ օրէն էր նմա , նա ուարտ իսկ , գուլ զիրօք աշխարհիս : Արակէս ասացաք , եղեն ի նոցանէ որ թագ անգամ կտպեցին :

Այնպիսի իմն է բնութիւն մարդկեզէն զի բազում անգամ տալուկայ իմն երթալ յո դէմ եղեալն է : Ի դէմ է վառել զսյնպիսեաց եռանդն , ածել յուզութիւն , տալ հիւանդացելոյն որ մազկուինչ մերձ ի մահն է՝ ոգի կենդանութեան : Յատի եկն ընկերութիւնն պահանջել զի իւրաքանչիւր միանձնն կայցէ դէտ իւրոյ ընկերին . և զամենայն ինչ զոր գիտէր զնմանէ՝ հանցէ ի վեր որում պարտոն էր : Թուէր նմա լսել համապազ զահեղն զայն բարլսու առ մորդարէն . « Դէտ կացուցի զքեզ , որդի մարդոյ : » Այսու իսկ Յիսուսեանն ուստ լրտես : Եւ զի եկեղեցին էր տւանդապահ ամենայն գովզնեաց , ի վախճանի չմնայր ինչ ի նմանէ ի ծածուկ , և այս իսկ բաւական մրցանակն որում ունէր ակն : Այսպէս միշտ տուոյդ , միշտ երիտասարդ , վառէր Յիսուսեանն մասել զանձն ի գործ : Յետ ոչ բազում ամսոյ հաստատութեան կարգին , առին Յիսուսեանք ի ձեւն զգործ հասարակաց կրթութեան յԵւրոպա . էին միջամբուխ յամենայն գործս , գիտակ ամենայնի որ ինչ նիւթէրն . եղեն ի բանի ընդ թագաւորս և ընդ պաշտօնեաց նոյա . արքունիք էին բաց առաջի նոցա . չէր նոցա դժուա-

րին իրրեւ դրան երիցունք ունել մուտ առ կանոնին զորս  
ուսան ածել զիւրեամբք : Այլ ոչ այսչափ միայն . գիտացեալ  
թէ դիպող է վաճառականութիւն , ոչ ի յաճախել ինչս մի-  
այն , այլև ի շահել զմիս , յո՛ և երթային , հանդերձ քա-  
րոզութեամբն դային և զոուրեւառօք : Եղեն ոմանք ի կար-  
գըս մեծամեծ թանգարաց , կուլան աղերս ընդ երեւելի վա-  
ճառականս արեւելեան և արեւմուեան Հնդկաց , և ունէին  
զովոզ և մթերանոցս յերեւելի երեւելի քաղաքս Եւրոպաց ,  
ի կարի իսկ վաճառաշահս : Ուխտ աղքատութեանն չեղեւ նո-  
ցա խափան ի կուտել անբաւ մեծութիւն , մանաւանդ զի  
մեծ իմն և ազնուական ասպարէզ առաքելութեամբն բացաւ  
նոցա առաջի յԱմերիկա , այն է ուսուցանել վայրենեաց  
հանդերձ քրիստոնէութեամբ և կարգս քաղաքայինս , որպէս  
արարին ի հարակուա : Ժողովուրդք , որսորդք , անտառա-  
բնակք , սորամուտք , ծակախիթք իրրեւ դդաղանս , ուսան  
շինել քաղաքս , գործել զերկիր , ժողովել արդիւնս , լինել  
միջամուխ ի տուրեւասս , վարժել յարուեսս , յուսումն  
գիտութեանց , ի զինուորութիւն անգամ . էին նոցա հետե-  
ւակք և հեծեալք ըստ օրինակին Եւրոպացւոյ . համաւօտ  
խի ասել , մարդիկ որ հազիւ գիտէին ընտանեաց հոդ տու-  
նել , անհամբոցք , չմարթունք , որ գիտէին իսկ ոչ թէ զինչ  
քաղաքաւորութիւնն իցէ և ազատութիւն , ուսան կեալ յըն-  
կերհաշտութեան , լինել ինքնօրէնս , աղիկամիս : Յիսուսեանք  
էին վարդապետք այսր ամենայնի , և այսպիսի իմն հնարիւք  
ակն ունէին տարածանել զիշխանութիւն եկեղեցւոյ ընդ նոր  
աշխարհն բովանդակ , որպէս լեալ էր ի սկզբան յԵւրոպա ,  
զոր և ջանացին իսկ ածել յայն կարգ : Այս ջան ևս Յիսուս-  
եանց չէր ինքնին խոտելի . խոտելին ոյն էր զի վախճանն  
թուէր ոչ այնչափ հասարակաց օգուտն , որչափ համաշխար-  
հական տէրութիւն Պապին , և Յիսուսեանն ոչ այնչափ ա-  
ռաքեալ տիեզերաքարոզ , որչափ տիեզերական լրտես Հռո-  
մայ : Այս կարծիք հասարակաց , ուզիլ կամ թիւր , հուսկ  
ուրեմն արկ ահ իմն և երկիւղ ի միտս բազմաց : Աէրն և մե-  
ծարանք , վատահութիւն և զարմանք զորս վայելէր Յիսուս-  
եանն՝ արագ արագ ետուն տեղի ատելութեան և արհամար-

հանաց , կասկծանաց և գարշանաց գոնեայ մեծի իրիք և  
աղնուագոյն մասին մարդկան յԵւրոպա : Քաղցրութիւն նոյա  
թուէր կեղծաւորութիւն , մարդասիրութիւնն՝ նենգութիւն ,  
ուսումն նոյա՝ գու : Յիսուսեանն եղեւ ի վերայ Եւրոպայ  
ձեռն երկաթի պատեալ մետաքոյւ : Յընդհանուր վանահօրէն  
որ նոտէր ի Հուոմ , և էր միահեծան տէր ի վերայ իւրոցն  
հնազանդեցելոց և մատակարար առանց պատասխանի տալոյ  
մեծագանձ ստացուածոց ընկերութեանն , մինչեւ ի խոնար-  
հագոյն միանձնն որ զիեանս իւր մաշէր ի մէջ Անտեան լը-  
րանց , յափունս գետոյն Հուանկ-Հոյ , ի գաշտս Միսսուրի գե-  
տոյ , կամ ընդ այրիչ արեգակամբ . Ապիսինիսոյ : Յիսուսեանն ,  
եթէ խոստովանեցուցանէր զյելյեղուկ բնակիչս մայրաքա-  
զաքին Գաղիացւոց , եթէ հծծէր յականջս գոռող և անա-  
գորոյն արքային Սպանիացւոց ինչ զոր չէր արժան , եթէ  
միամարէր զէկքն շինական իրլանտացի , օրհասական յիւրում  
անկան , եթէ վիճէր ընդ մանտարինս յարքունիս անդ ձենաց  
թագաւորին , եթէ գողանայր զմիրտս նորահաս մանկաւոյն  
ի խոնարհագոյն դպրոցս և կամ սէգ ուսանողին ի հանդիսի  
ակագեմականաց , եթէ կրթէր յաղուշ զժողովս դիտնոց խո-  
րութեամբ իւրոյ փիլիսոփացութեանն և մեծասքանչ գիւտ-  
իւք գիտութեան , եթէ յորժամ երեւէր յակումս վաճա-  
ռականաց և ի վաճառանոցս մայրաքաղաքաց ի գործ տուրե-  
ւառիկ փոփոխմանց որ ցայնժամ հրէից վաշխատուաց եւեթ-  
էր գործ , թէ կայր կալանակապ ի բանտի յԱնդղիա իրրե-  
ընդվայրայած շաղաջուտ , և կամ նստէր յաթոռ թագաւ-  
որութեան , եթէ էր տէր կալուածոց մեծասմեծաց , կամ  
մեծաձիգ լոյնտարած գիւղից և ագարտակաց ի Հոդիկս և  
ի հարսւայինն Ամերիկա , եթէ խառնէր ընդ խաժամուժ տու-  
բովին ի փողոցս Լոնտոն քաղաքի խօսելով բանս հրապուրիչս  
յականջս բողոքականաց՝ թէ հապտակք ունին իրաւունս հա-  
կառակ կալոյ թագաւորին իւրեանց , նա ընկենուլ խոկ զնա  
յաթուոյն , կամ եթէ յածէր ի շէնս կաստիկեայ և Վէսնի՝  
քարտզելով կաթողիկէ շինականաց թէ կարեւոր պարտք լար-  
ոյ քրիստոնէի են հնաղանդել ամենայն հրամանաց թագաւ-  
որին իւրոյ , և որ աւելին է՝ եթէ խօսէր ի բեմէ բանս հո-

զերտախս ի գրաց մինչեւ կամկվել զափրաս սալացեալս և տալ հարդկանել յարտասուս, և կամ քարոզէր վարդապետութիւնս զբարուց լաւութենի լի ողւով և չերմն հաւասար, համառոտիւ, ուր և դտանէր այց Յիսուսեան և զինչ և առնէր, հասարակաց կարծիք յայտ իմն միաբան էին՝ թէ այլ ընդ այլց իմն կիտ նարտակի իրբեւ ընդ պատրուակու ծածկեալ թագուցեալ կայր յայնմ տամենայնի : Հնարք նոցա ի ծածուկ և լուելեացն և մեծազօրն զօրութիւն նոցա եղեն հուսկ ուրեմն այնպէս չժուժովի, մինչեւ արտաքսել նոցա ի Գաղիայ, ի Սպահիայ, ի Կուսիանիայ և յայլոց կաթողիկէ աշխարհաց : Եղո՞ւկ զի այսպէս առ վախճան ընկերութիւնն պատուական : Ոչ սակաւ օգնեցին Յիսուսեանք դիսութեան և դաստիարակութեան, նաև վարուց ուղղութեան : Մեծ մասն ի գիտնաց ժամանակին, եւս և ազնուադոյնք, էին նոցա ձեռասունք : Ի ցուցանել զմեծութիւն Յիսուսեան ընկերութեան բաւական իցէ ասել թէ չեղեւ ընկերութիւն մեծ քան զնա, ոչ ի հնումն և ոչ ի նորումն . ոչ Ֆրամանանեանն իւրազբն տհել և մեծարոյ զալոնութեամբք, և ոչ ասպետականքն իւրեանց հզօր կարգօքն զինուարութեան : Ծնկերութիւնն Յիսուսեան էր միշտ և յամենայնի մեծ, եւ յորժոմ առաքինանացրն, եւ յորժոմ զեզծաւն . եթէ ի պատկառեցուցանելն, և եթէ յերկեցուցանել . եթէ յուսուցանելն, և եթէ ի զեզծուցանել . եւ յորժոմ ետն սիցել, եւ յորժոմ ետն տակւ :

Բազում ինչ նպաստ եղեւ Հառոմ ի վիաս ընկերութեանն զոր առն անդէն ի սկզբան յերաշխի, և յորմէ տկնէր օգտա մեծ . այլ ետես զնորդին հակառակին : «Ծնկերութիւնն Յիսուսեան եղեւ այնչափ վիսասակար Հումայ, որչափ առ նաև : » Այնովէս մեծ էր սակայն ակնկարութիւն Հումայ յընկերութենէն, և այնպէս կենդանի ընկերութիւնն ի մահուան խոկ իւրում, զի յետ ջնջելոյ նորս քահանայտապետական կոնդակաւ յամին 1773, ոչինչ յամենաց առնուլ վերստին հասառութիւն . և այսօր Վիտուեան և Ատտիկան, եթէ ոչ նոյն, են համանուն և համակարիք :

# ԳԻՏՆԱԿԱՆ

Թէ. ԵՅՅՈՒՆ ԲՆԱԱԿԻՉՔԻ Ի ԼՈՒՄՆԻ (¹)

Տիեզերաց, տաեն զիտունք, անդուսս ի լնէ եղան օրէնք՝ ամենայն մարմնոց որ ի միջոցի, այսինքն ի հաստատութեան Երկնից, յանկերպարան նիւթոյ խմեքէ որ կոչի նէւն այլուրական՝ զալ նախ ի ձեւ գաղեցէն գնդի յանհնարին ջերմութեան, յընթացս գարուց բիւրուց, ի ձեռն ամենաավարն զօրութեան որ զհիւզէս այնոր նիւթոյ զանհասս և զանբաժինս զլմառամք ձնեալ զնդէ ։ ապս, ըստ նուազերոց անափի ջերմութեանն որ անդադար ճառադայթմամբ հսուեալ ցրի ի բաց շուրջանակի, գառնալ տակաւ զաղեղէն գնդին ի մարմին հսուանուտ մարմնոյն փոխել առ սակաւ սակաւ ի մարմին հսուաստուն գնդակերպ, և յայնծամ լնուլ կենդանութեամբ, այն է՝ երեւեցուցմնել զրուականս և հսուել զազգս չնչոց կենդանեաց ։ յետոյ ուրեմն, ի սպառել ամենայն կենաարեր հիւթոց, անկանել աշխարհին ի կենդանութենէ և լինել ամենեւին վայր մեռելութեան։

Այսովէս ամենայն մարմին որ ընդ ափեզերո, ըստ անփոփոխ օրինաց բնութեան, անցեալ է կամ անցանէ, տաեն, ընդ չորեսին ժամանական ընդ այնամիկ՝ յանարդ նիւթոյ անափ մինչեւ ցմեւելութիւն։ Այսպէս տաեն զամակերպից (²) լինել նիւթ ափեզերական կամ ափեզերական նիւթոյ յաճախութիւն, այն է՝ ունել զհանդամնոն ընդ որ անցին ամենայն մարմինք տիեզերաց յառաջ քան զգալ խրեանց ի ձեւ զնդի։ Այսպիսի ինչ է ամպակերպն որ յաստեզատանն Հայկաց զօրէն

(¹) Տես զթիւ Ա.

(²) Nébuleuse, զոր թարգմանեմբ այս անուն պատշաճ ֆուի մեզ քան զբէաւան անուն զոր տովոր են ոմանք ի կիր արկանել ։ զի ի կերպարանս լուսաւոր ամպոյ երեւին ամպակերպ ի խորս Երկնից ուրեք ուրեք, և ոչ մածեալը զօրէն մառախորդ ։ Յամպակերպից են զոր հեռաղէտ գործեաւ եւեթ մարթ է տեսանել, զոր օրինակ զամպակերպն Անդրուսայ, և է որ տեսանի լոկ աչաց, որպէս ամպակերպն Հայկաց։

լուսաւոր շտմանդաղի . ի նմա , ամեն , կազմին կարգին տակաւ գաղեղէն գունդք , այսինքն արեգակունք , ըստ հանդամանաց Արեգականդ որ լուսատու լինի յԵրկիր : Զի ամենայն տատեղք , ոչ գնայունքն , զուս տեսանեմք յԵրեսս Երկնից՝ արեգակունք են ահաւորք մեծամեծք , և վասն անհնարին հեռաւորութեան խրեանց յԵրկրէ՝ Երեւին մեզ որպէս կէտք եւեթ լուսարձակք ետեղակալք ամենեւին ի հաստատութեան անդ :

Յետ կատարելոյ առաջնոյ դարուն , այն է՝ յետ անցանելց գաղեղէն ժամանակին , գունդ գաղեղէն կազմեալ յամակերպի ուրեք՝ փոխի ի մարմին հոսանուտ , վասն ջերմութեանն նուազելոյ . ապա շրջի ի մարմին հաստատուն , մինչեւնուլ թերեւս բուտիք և չնչականք , և ի կատարած ամենայնի՝ գառնայ յանսպատ մահու : Այլ թէ զի՞նչ յետ մահուն լինելոց իցէ աշխարհն կարձեալ ի կենաց կամ գերեզմանն գնայուն , զայդմանէ չիք ինչ առել հաւաստեաւ . զի ում է մարթ գիտել զիսորս խմաստութեան Աստուծոյ և ոծել ի յացտ զամենայն գաղտնիս բնութեան : Այսպէս անց և Երկիր մեր ընդ դարան երկասին որ յառաջ քան զայդմու դարն կենդանի՝ ի լինելոց յանարդ և յանկերպարան նիւթոյ անտի մինչեւ ցերեւեցուցանել յինքեան զազգս բուսոց և չնչոց կենդանեաց . այլ , ի կատարել աւուրց կենդանութեան , անկամնելոց է և Երկիր մեր յանդունդ մահու , ի մեռելութիւն մշտնջենաւոր , հանդերձ ամենայն մեծութեամբք և փառօք մարդկան . . . :

Արդ , զի և Լուսին մարմին մի է Երկնաւոր յամենայն մարմնոց Երկնաւորաց որ ընդ տիեզերս , իրրեւ աղքանեակ մոլար աստեղ (Երկրի) ի գրութեան Արեգական մերոյ , այն յայտ խակ է ամենեցուն . ապա չիք լինել յերկմիսա՝ եթէ և Լուսին անցանելոց էր ընդ չորեսին դարսն մի ըստ միոջէ : Դիտել թէ յորո՞ւմ դարսւ ի չորից անտի իցէ արդ արքանեակն Երկրի՝ տացէ մեզ ապաքէն ունել կաշճիս ինչ հաւատնութեան զմնդրոյ բնակիչաց :

Զի այժմու դարն Լուսնոյ չէ՝ գաղեղէնն , յայտ անտի է զի չիք նորա առանձինն լսյս և ջերմութիւն , դարձեալ չէ՝

հոսանքուան , այնու զի լերինք բարձրաբերձք և ձորք խորագոյնք երեւին ի վերաց նորա հեռադիտու . անհարթութիւնք ամենայն ուրեք են ի նմա , և յայտ է զի հոսանքուան բնութեան չէ հնար ունել զանհարթութիւնս : Ապա մարմին հաստատուն է Լուսին , այն է՝ անցեալ յառաջ քան զդարն առաջին և վերկրորդ : Խնդիր է արդ՝ եթէ յերրորդ մնմ դարուն իցէ ընկերն Երկրի թէ ի չորրորդումն , ի կենդանութեանն թէ ի մեռելութեան :

Թէ մարթիցի շինել դործի մի հեռադէտ որ զօրիցէ մերձեցուցանել զլուսին գոնեայ մինչեւ ցվեց հազարամիդք , յայնժամ լիցի հնար ճշդիւ դտակաւ արկանել ի քնին զերեսս Լուսնոյ և տեսանել աչօք խակ բոյսս կամ չնչաւորս , եթէ իցեն : Թէպէտ չիցէ այն անհնարին , այլ որ ցայս վայր շինեցան հեռադէտ դործիք՝ ոչ զլուսին առաւել քան զվեշտասան հազարամիդք մերձեցուցանել կարեն : Ապա ուրեմն մնայ մեզ ոցլով իւիք օրինակաւ կալ իրացդ ի վերայ , որչափ և մարթ իցէ :

Զիք զլուսնով , որսէս ցուցաք , օդ համատարած , և ոչ ջուր , որում բնութեան չէ հնար լինել առանց օդոյ . ապա պակսուեն ի Լուսնի երկոքին պատճառք կենդանութեան , և' օդ և' ջուր : Եւ զի տուանց օդոյ և ջրոյ չէ մարթ կեալ երկրային րուսոց և չնչաւորաց , ապա և չէ հնար գտանել ի Լուսնի ամենայն ազգաց բուսականաց և չնչոց կենդանեաց որ չնչեն և կեան ի վերայ Երկրի : Կարծիք են լոկ , ոչ ըստ խմիք հաւանութեան , ասել եթէ դտանին բնակիչք տակսուին յանդնդախորս Լուսնոյ : Այլ չէ տաել թէ ոչ եղեւ երրեք զի բնակեցաւ Լուսին՝ յօրէ յորում եկն ի կերպարանս երկնաւոր մարմնոյ , մինչեւ ցօրն յորում զրաւէր ի կենաց ըստ օրինաց համագոյից :

Ապա հաւասառեաւ իմն կարեմք ասել թէ էր երբեմն յորժամ բնակեցաւ և Լուսինդ հանգոյն Երկրի և զօրէն ամենայն երկնաւոր մարմնոյ , զորս չէր պարտ Արարչին թողութափուր ի բնակչաց , ըստ հասարակացն օրինաց որ անդըստին ի բնէ կարգեցան վասն լինելութեան տիեզերաց :

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԱԼՆ ԿԱԹՆԱՎԱՐԱԴԱՐ

Բերեղ ի գլուխ իւր ի բարձկան վե-  
րայ փորու

Տանէր զկանին ամման զեղուն.  
Կարծէր այնպէս մինչ ի բաղաք  
երթալ յաջող:  
Թեթե՛ւ, կարծահանդերձ, նա մեծա-  
րայլ երթայր յառաջ.  
Առ աւելի իմբն լինել շրյտ՝ ըզգեցեալ  
էր նա զայն օր

Լոկ պարեզօտ, եւ օդ ոտիցն էր  
շըդուական.  
Կաթնավաճառն, այսպէս հանգու-

շըն բարերիկ.

Հաշուէր մըտօք զիւրոյ կաթին  
Ըզգին. «Զարծաթն», ասէր, «այս-  
պէս արկից ի կիր.  
Չուս հարիւր զընեցից, եւ հաւը ե-  
րեք նըստցին ի թուսս.

Թէ տարաց հանապազորդ խընամ,  
անշուշտ ելցեն ծազունք.  
Ապաքէ՞ն դիրին է ինձ  
բուծանե՛լ ըզգառեալ կաըն զիմով  
տամբ շուրջանակի.  
Աղուիսո՞ւն ի նոսա՛ չըտամ հըպել  
չարանցմոյ.  
Եւ լեալ նոցա հոտ՝ վաճառեմ, եւ  
արծաթովն առնում խոճկոր.  
Ես պարաքել ըզիսով ոչ այլ ինչ է պի-  
տոյ բայց զոյզըն նեփ.

Ըզխտնկո՞ր մի ասկատոք մարթ է;  
զընել.

Այլ ո՞չ զոնեայ կըրկին զընոց վաճա-  
ռեցից ըզսոնքացեալն.

Եւ ո՞ զի՞ն արգելուցու զընել ի զոմս  
իմ ընդ նորա

Ընդ այնչափ արծաթոյ երինջ՝ մա-  
տադ որթովն հանդերձ.

Զոր տևից խայտալ ոստնուլ ի մէջ  
նախրոյն»:

Ընդ ասելըն զայս ոստնու եւ բերեղ  
ինքն առ խընդութեան.

Կաթն հեղու, եւ ցընդին յօդ հաւը  
եւ խոճկոր, երինջ եւ որթ.

Ըիկինըն տէր այնչափ ընչից, ակըն-  
կոր իմըն սըրտառուչ,

Թողեալ զիր զոյսն անդ ցիր եւ  
ցան՝

Անբասի՞ր զանձն իւր առնել եր-  
թայ անտի

Առ այր ի՞ր, որ չարազան ըզնա  
Թոպէր,

Թէ կինն հըտպիտ ըզնա ծաղու  
չէր ողոքեալ.

Ազատե՛լ ազատեցաւ նա ի զանէն,  
Այլ յօրէ՛ անտի նըմա եղաւ անուն

«Աման կաթին»:

Ի. Ա. Յ. Թ. Ե. Հ.

Ա. Մ. Գ.

# Վ Ե Պ

## ԲԱՐԵԿԱՄՄՔ ԵՐԵՎ

Առն միոց էին բարեկամք երեք . երկուքն ի նոցանէ սիրելի էին նմայոյդ . ոչինչ էր փոյթ նմա զերրողդէն , թէպէտ սա սիրէր զնա սերտիւ . ի միտոմ յաւուրց դէպ եղեւ առնն կոչել յատեան արդարութեան . « Ո՞վ ի ձենց , ասէ ցըարեկամն խր , կամիցի զալ ընդ խ եւ լինել վկայ վասն իմ . քանզի ամբաստանութիւն մեծ ծանրանայ ի վերայ անձին իմոյ » . Առաջինն ի բարեկամաց նորա արդարացուցանէր զանձն՝ եթէ ոչ կարէր ի նմին ժամու ընկեր երթալ ընդ նմա , զի արգելեալ էր յայլոց զործոց , Երրորդն չոքաւ ընդ նմա մինչեւ ցուուն ատենին . վկայ առ անդ եւ դարձաւ յետս : Երրորդն , յոր չէր ինչ վստահ այրն , երթայ մտանէ ի ներքս , խօսի ի նպաստ նորա եւ վկայէ վասն անմեղութեանն այնպէս իմն հաւանութեամբ , մինչեւ դատաւորին անպարտ արձակել զայրն :

Բարեկամիք երեք են մարդոյ յաշխարհի աստ . զի՞արդ վարիցին ընդ նմա ի ժամու օրհասի , յորդամ կոչէ զնա Աստուած ի գատաստան խր : — Արծաթ , բարեկամ նորա սիրելի , անդին եւ անդ լրանէ զնա եւ ոչ երդայ ընդ նմա : Ծնոլդ նորին եւ բարեկամը զնան զիես մինչ ցուուն գերեզմանի , եւ դարձ առնեն ի բնակութիւնս իւրեանց . Երրորդն ընկերակից լինի նմա մինչեւ ի զահ երկնաւոր Դատաւորին . այս են զործը նորա բարիթ . սոքա յառաջին քան զնա , խօսին ի շնորհս եւ արդարացուցանին զնա , եթէ իցն բազումք եւ ի պատճառս բարեաց արարեալք :

ՇՏԵՄԱՐԱՆ ՆԿԱՐՈՒՑ (Magasin pittoresque)

Յ. Գ.

## ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ ՀԱՅԵՐԵԿԻՆ ՀԵԶՈՒԻԻ

Ա

ԱՀ ԲՆԴ ԱՀ . Հայութելով . + + շուտելով : \* Եւ սչ այնուհետեւ ան ընդ ահ խօսեր :

ԶԱՀԻ ՀԱՐԿԱՆԻՄ . ինսոյ վախեալ : \* Զահի հարսան ամենայն մարդիկն : — \* Զահի հարեալ եմ ես ի նմանէ : — \* Զահի հարեալ եմ վասն բարկութեանն :

ԱՀԱՓԵՏ ԱՌԱՆԵԼ . Հայ պալ : \* Ահափետ ալարեալ զօրհասն գուշակեն :

ԱՂ ԱՌՆՈՒԼ . «Եղանակից ըլլու» : \*Աւազակք , յորժամ ընդ  
մվմեանս աղ առնուցուն , մոռանան զբարսն :

ԱՂԱՂԱԿ ԲԱՌՆԱԼ . ԴՆԵԼ , ԱՌՆԵԼ , ՀԱՐԿԱՆԵԼ , ՏԱԼ .  
պուռալ հանձւլ : \*Աղազակ բարձ յայնկոյս ծովուն : — \*Փող հար-  
կանէին , զաղաղակ գնէին : — \*Աղազակ արասցէ վասն նոցա  
յաւուր յայնմիկ : — \*Մեծաւ գոչմամիք զաղաղակ հարեալ :  
— \*Ո՞վ իցէ ի մարդկանէ որ ի տագնապել հոգւոյն զաղաղակ  
տացէ :

ԱՂԱՄԱՍՈՒԿ ԱՄԵԼ . բանութեայ ընել . աւրել . չէ ընել :  
\*Եթէ զամօթն ի սկզբանն իրեւ զգվասպիր գլուխյն մերկա-  
նայցէ , զբնուն եղծանէ , յամենայնի վերայ աղամասուկ ա-  
ծիցէ :

ԸՆԴ ԱՂԲ ԳԱԼ . աւլուի պէս +աշ համ մէրէի յէրէլ :  
\*Ծնորեցի ես ընդ աղը գալ ի տան Աստուծոյ առաւել քան  
զբնականալ ի յարկս մեղաւորաց :

ԸՆԴ ԱՂԵՂՆ ՄՏԱՆԵԼ . աղեղ լորել : \*Ասէ ցարքայն իս-  
րայելի . Մուտ ընդ աղեղնդ ձեռօք քովք . և եմուտ ընդ  
աղեղնն ձեռօք իւրովք :

ՑԱՂԵՐՍ ԱՆԿԱՆԵԼ . աղանձ պաղպէլ : \*Աղքատն զրկեցաւ ,  
և նոյն յաղերս անկցի :

ՑԱՂԵՐՍ ԱՄԵԼ . հունի շորժել : \*Արտաստուեցին սցրիքն ,  
և ածին յաղերս զԱստուած :

ՑԱՂԵՐՍ ԳԱԼ . հունի շորժել : \*Զգայր յաղերս պաղա-  
տանայն :

ԱՂՄՈՒԿ ԱՌՆԵԼ . իրար անցնէլ . իսուն-նիւն հանել : \*Ո՛չ ,  
որպէս նոքա կարծէին , աղմուկ առնելով :

ԶԱՂՄԿԱԼ ԼԻՆԵԼ . իսունիւն . իրար անցնիւն մէջ ըլլու : \*Ա-  
ւովդ զերծաւ ի Սիրովթա , մինչ նոքա զաղմիաւն էին :

ՑԱՂՕԹՍ ԿԱԼ . ԿԱՆԻՆԵԼ . աղընիւն : \*Պարու է յամենայն  
ժամ յաղօթս կալ : — \*Նտարուք այդր , մինչեւ երթայց  
կացից յաղօթս : — \*Կանկսեմք մեք յաղօթս մեր վասն ձեր :

Յ. Գ.